ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացում իրականացված միջոցառումների վերաբերյալ

Ծրագրում ներառված վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները յուրաքանչյուր տարի կարող են փոփոխվել՝ ելնելով հարևան երկրներում, ինչպես նաև հանրապետության առանձին մարզերում արձանագրված դեպքերից:

Հանրապետությունում, ինչպես նաև տարածաշրջանում անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու նպատակով կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել մշտական և շարունակական՝ համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1544-Լ որոշման, ապահովելով պարենային անվտանգության ողջ արժեշղթան:

2024 թվականին «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում իրականացվել է ախտորոշիչ 849.693 և կանխարգելիչ 4,191.060 հատ միջոցառում:

Համաձայն «Հայաստանի Հանարպետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» (այսուհետ՝ Համարակալում և հաշվառում) ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի N 818-Լ որոշման 2024 թվականի ընթացքում իրականացվել է 195 400 հատ միջոցառում: Համարակալում և հաշվառում ծրագրի իրականացման կարևոր բաղադրիչ է «ԱՆԻ ՊԱՍ» էլեկտրոնային տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ համակարգ), որն ապահովում է կենդանու վերաբերյալ տեղեկությունը (անասնատեր, կենդանու անհատական համար, հաշվառման վայր, անասնաբուժական միջոցառումներ, տեղաշարժ և այլն) մուտքագրելու և վերլուծելու գործընթացը: Համարակալման և հաշվառման ծրագիրը հնարավորություն կընձեռի ստեղծելու և ներդնելու կենդանիների ու մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու վերահսկման նոր արդյունավետ համակարգ: Համարակալման և հաշվառման ծրագիրը կնպաստի նաև կայուն անասնահամաճարակային իրավիճակի ապահովմանը, հետագծելիության ապահովման նոր մեխանիզմի ներդրմանը, կենտրոնացված տվյալների բազայի

ձևավորմանը, կենդանիների տեղաշարժի վերահսկմանը, ինչպես նաև նախադրյալներ կստեղծի կառավարության կողմից առավել նպատակային ծրագրերի իրականացման և անասնաբուծության ոլորտի կայուն զարգացման համար: